Պարույր Սևակ

Նոր ծանոթություն

Ծանոթանա՞նք:
Շա՛տ լավ:
Բայց ես անո՛ւն չունեմ:
Թե ուզում ես, խնդրեմ, «Հոմո Սապիենս» կոչիր
Եվ ազգանվան տեղ էլ ասա «Հարավ»:
Ես աչքերս եմ փակում:
Ես հոգնած եմ, այո՛:
Տիկնիկն էլ է հոգնում, երբ ետևից բեմի
Ինչ-որ թելեր նրան ստիպում են ապրել:
Այդ ապրե՞լ է կոչվում: Ի՞նչ իմանամ:
Ծառերը մայթերին բազմակետ են դնում.
Ունեն ինչ-որ գաղտնիք, որ ես չեմ ընդունում:
Չէ՛, ես սխալվեցի.
Գաղտնիքն ընդունում եմ,
Չեմ ընդունում արգելքն այն անտեղի,
Որ միշտ բազմակետ է բազմացընում...
Եվ փրփուրը բերնիս ես կարող եմ վիճել,
Որ բերան է տրված ո՛չ ուտելու,
Այլ խոսելո՛ւ համար:
Եվ ավելին.
Շուրթերո՛վ են խորհում, ո՛չ թե գանգուղեղով:

Ծանոթացա՞նք:
Դեռ ո՞չ:
Շարունակե՞մ:
Սոված՞ են ոտներըս.
Թող հո՛ղ կոխեն մի քիչ:
Եվ աչքերս են սոված.
Չի կշտացնում լույսը...
Անմահության համար տաղանդ պետք չէ բնավ.
Հարկավոր է լինել գոնե մամոնտ կամ խոտ,
Որ իր տիպն է թողել քարածըխի շերտում...
Եվ չի պոկվում ինձնից մի անսահման կարոտ,
Ու զզվել եմ արդեն պարզությունից գծի:
Թե կեռ-կորությունը շռայլություն է մեծ,
Չկարոտե՞մ գոնե այն կետ-գծին,
Որ նեղ նպատա՛կ չէ,
Այլ երազա՛նք այրող...
Ծանոթացա՞նք արդյոք:
Բեթհովենի՛ց հարցրու,
Մի՛ մոռացիր, սակայն, որ նա խուլ է մի քիչ
Եվ կարող է հարցրդ չհասկանալ:
Իսկ ես ավելացնեմ,- քեզ օգնելու հույսով,-
Որ ինձ փոքրիշատե ճանաչելու համար
Հարկավոր է զրկվել... նախապաշարմունքից:
Որ և հեշտ չէ նույնքան,
Որքան որ ապրելը...
Ո՛չ մի գաղտնիք չունեմ իմ կնոջից անգամ,
Իսկ թե ստիպված եմ, այսուհանդերձ, ասել՝
Մեղավորը ե՛ս չեմ,
Իսկ թե ո՞վ է՝ քե՛զ ինչ:
Ինչո՞վ պիտի օգնես,

Ի՞նչ կփոխես:
Անկեղծության համար թե խաչեին,
Քրիստոսը վաղո՛ւց չէր ունենա պաշտող:
Ա՛խ, այդ պաշտամունքը, որ ձևեր է փոխում,
Ինչպես մոր մեջ սաղմը,
Բայց ծնվելիս ծնվում մի՛շտ մանուկի նման՝
Ուղեղը դեռ անբան և աչքերը դեռ զոց...
Ծանոթացա՞նք արդյոք:
Դու՝ չգիտեմ,
Իսկ քեզ ճանաչեցի ես իսկապես:
Քո փոխարեն աչքերդ ասում են լուռ,
Որ ինձ համարում ես ծանրը հիվանդ,
Եվ զառանցանք՝ խոսքըս:
Բայց հավատա՛.
Խոսքս զառանցանք չէ,
Ոչ էլ հիվանդ եմ ես:
Ես պարզապես վաղուց համոզված եմ,
Որ դուր գալու ծանոթ առևտրրում
Հարկավոր է լինել չմանրվող դրամ
Եվ չծախսել իրեն կոպեկ-կոպեկ...
Ծանոթացա՞նք արդյոք:
Անշո՛ւշտ, ծանոթացա՛նք:
Բաժանվելուց առաջ թույլ տուր ասեմ զոնե,
Որ քեզ նմանները, իմ սիրելի՛,
Գուցե կարողանան ինձ ամե՛ն ինչ անել,
Բայց չեն կարող խլել լավատեսի
Իմ ժպիտը, այո՛, իմ ժպի՛տը,
Նամանավանդ եթե չմոռանանք,
Որ ժպիտի ինչ-որ մի տեսակն է նաև
Անմահ քմծիծաղը...

Մնաս բարև՛:

30.IX.1961թ.
Երևան